ՕԾՎԵՑ ՆՈՐՔԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 մայիսի 2000 թ.:

Կիրակի օրը, ապրիլի 30-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Երևանի Նորքի զանգվածի Ս. Սարգիս եկեղեցու օծումը:

«Մեզ համար մխիթարություն է, որ եկեղեցու օծումը կատարվում է հայրենական մեր կյանքի այս դժվարին օրերին, երբ փոքր-ինչ վիատություն ունենք մեր սրտերում, երբ փոքր-ինչ համակված ենք անորոշությամբ: Հավատում ենք, որ դեպի երկինք եկեղեցիների նոր խոյանքը պիտի գա փարատելու մեր հոգու մեզը, պիտի վերացնի անորոշության քողը մեր հոգու հայացքից, ու պիտի կարողանանք տեսնել հայրենիքը շենացնելու այն ուղին, որ ազգային միասնականությունն է, ազգային սերը միմյանց նկատմամբ»,- շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով, ասաց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով նրանց մշտական աղոթքներով, ուխտով, խնկարկությամբ ու մոմավառությամբ կենդանի պահել մարդկանց հոգիների փրկությանը կոչված Աստծո տունը:

Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի նախագծով ուղիղ մեկ տարի առաջ սկսված հոյակերտ այս եկեղեցու շինությունը ավարտվեց ճիշտ ժամանակին: Ու թեև եկեղեցու օծմանն այլևս ներկա չէր եկեղեցու բարերարը՝ հանգուցյալ Սարգիս Գաբրիելյանը, սակայն նրա բացակայությունը լրացնում էր բարերարի որդին՝ Մարկ Գաբրիելյանը՝ իր փիկնոջ ու երեխաների հետ: Արարողությանը ներկա էր նաև Տ. Գառնիկ քահանան, որ նույնպես իր կարևոր ավանդն ունի եկեղեցու կառուցման գործում:

Նորին Սրբությունն իր գնահատանքի, երախտիքի ու շնորհակալության խոսքն ուղղեց Սարգիս Գաբրիելյանի ընտանիքին, Տեր Հորն ու բոլոր նրանց, ում շնորհիվ կառուցվել է փառահեղ այս եկեղեցին:

Ապա նորաօծ Սեղանի առաջ մատուցվեց Ս. Պատարագ:

Հավարտ Պատարագի Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ հանգուցյալ բարերարի, կատարեց հոգեհանգստյան արարողություն: